

Բէեւ Աւագներու Խումբը տարուան նպաստաւոր եղանակներուն միայն ամիսը անգամ մը հաւաքաժողով ունեցած է, այսու հանդելք բոլորիս համար հաճելի եւ հոգեպարար առիթներ դարձած են անոնք, վայելելու իրարու ընկերակցութիւնը։ Իւրաքանչիւր հանդիպումին կ'ունենանք կարճ ժողով մը, դաստիարակչական յայտագիր մը եւ միասին ճաշ կ'ընենք։ Հոկտեմբերի ճաշին հիւրասիրութիւնը իր վրայ առած էր Անահիտ Զուխանձեան, իսկ նոյեմբերինը Տիկնայք Արմէն Գալուստեան եւ Թագուհի Պելաւեան Քոյրերը, ինչպէս նաեւ ուրիշ անդամներ Խումբէն։

Մեծ Պահոց ընթացքին մեր խումբը իր կարգն առաւ հայթայթելու ընթրիք, որմէ գոյացած գումարով մեր համեստ գանձը քչիկ մը եւս պարարտացաւ։

Դաստիարակչական յայտագրին մէջ իրենց մասնակցութիւնը բերին Տէր Հայրը, սպա մեր անդամներէն Տիկ։ Քեջեան եւ Տիկ։ Համբսըն պատմեցին Հայաստանի հոենց ուխտանացութենէն յուշեր, ինչպէս նաեւ Տիկ։ Լուսին Պարտագեան Ֆիշմըն, որ շահեկան տեղեկութիւններ տուաւ առողջաբանութեան վերաբերեալ։

Մեր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնենք մեր Տէր Հօր, որուն նախաձեռնութեամբ մեր Խումբը կը շարունակէ իր ընթացքը։ Մասնաւոր շնորհակառակութիւն Անահիտ Զուխանձեանին, որ սիրով ու զուարժութեամբ կը կատարէ մեր հիւրասիրութիւնները։ Նաեւ շնորհակալ ենք Նոյեմ Փոլատեանին, Օժիկ Թումային եւ Նոյեմ Համբընին, որոնք սիրայօժար կերպով կը տրամադրեն իրենց ժամանակը զմեզ տունէն ժողովակայր եւ անկէ դարձեալ տուն փոխադրելու եւ մեզի հետ ժամանակ անցնելու։

Աղաւնի Սահակեան

Ատենապետուհի

Մինա Մանուկեան

Գանձապահուհի

Սրբուհի Թորոսեան

Ատենապրուհի

*Տերության գույքը*